

ՆԱԽԱԿ ՊԱՇՏՆ

ՄԵՐ ՄՆԱՅՈՒՆ ԹՂԹԱԿՑԷՆ

ՄԵՐ ՅՈՒՐԵԼԵԱՆԸ

[ 413 - 1513 - 1913 ]

ԱՆՕՐԻՆԱԿ ՈՐԳԵՆՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՎՈՐԱԿՈՒՆ ՄԷՉ

913 ՀՈԿՏ. 14 ՊՈՒԽՍ

«Այս ողբերգութիւնը եւ խանդա-  
վառութիւնը Մահամազուրիթեան յայ-  
տարածան ժամանակն իսկ չկար» դի-  
տել տուաւ հանդիսական մը անցեալ  
չարաթի (հոկտ. 12) Գումգափուի Մայր  
եկեղեցիի հանդէսին մէջ, եւ արգարեւ  
ինչքան անտղասելի եւ անկնկալ մը  
եղան ամենուս համար շարաթի եւ կի-  
բակի օրերու այնքան կենդանի եւ այն-  
քան խանդավառ հանդէսին ու հա-  
ւաքումները որոնք տեղի ունեցան  
Պոլսոյ բոլոր թաղերու եւ արուարձան-  
ներու մէջ: Հայ ժողովուրդը Պոլսոյ  
հայ ժողովուրդը որ շատ անգամներ դա-  
տապարտուած էր իրաւամբ իբրեւ ան-  
տարբեր եւ սառն դէպի Աղզային ճու-  
րականութիւնները այս երկու օրերու  
ընթացքին ժառանգ մը հերքեց այդ  
ամբաստանութիւնը, ժառանգ կ'ըսեմ  
արտիկտեւ միայն սգեւորութիւն եւ  
չարժում չի բաւեր կենդանի դործը  
իրական գործն է աւելի կարեւոր:

Այդ կէտին մէջ ոչ Պոլսոյ հայու-  
թիւնը տիրի ջանայ հերքել իր մասին  
կազմուած յոռի կարծիքները... առ այժմ  
չենք դիտեր...

\*\*\*

Շարաթի անարունէ սկսեալ բոլոր  
թաղերու մէջ կը նշարուէր ողբեր  
կեանք մը շարժում մը: Արդէն մէկ  
չարաթի ի վեր թերթերը կը յայտարա-  
րէին հանդէսներու ծրարները եւ կա-  
րելի է բոլոր տեսակ մը մրցում բարի  
եւ օղտակար մրցում մը ստեղծուած էր  
թաղերու հանդէս կազմակերպող Յանձ-  
նակումներուն եւ Միութիւններուն միջև  
զիարտ գերազանցելու:

Ուրախութիւն պարագայ մը եւս Գրե-  
թէ բոլոր թաղերու մէջ քաղաքական  
զանազան կուսակցութիւնները, կրթա-  
կան եւ այլ Միութիւնները անօրինակ  
չայնտեսութեամբ մը այս ուրիշական  
տոնին առ թիւ համարաչափ Էին իրարու  
հետ մտացած նախկին աներողամը-  
տութիւնը եւ նոր թայրայական — յաճախ  
անձնական — հայտնեմ ու չկատուներ  
բը հաւաքակառնութիւն եւ հանդիսութիւն  
իրենց մասնակցութեան բաժինը բերած  
էին ազդ. այս մեծ հանդիսարարութեանց

առթիւ: Այս կը շնորհակալ յայտարարեմ  
զան որովհետեւ այդ իրողութիւնը կ'ա-  
պացուցանէ որ մեր մէջ քաղաքացիա-  
կան լայն եւ ազատ միտքերը հետզհետէ  
կը դանեն իրենց արմատները եւ թէ այդ-  
ուղղութեամբ թափուած աշխատալը  
զուրկանցնելու ինչո՞ք այս բոլոր ուրախա-  
րթի կրեւոյթներու հետ պայտ չի դան  
նաեւ տիրաւորութեան պարագաներ վուճա-  
փուի Մայր եկեղեցիին մէջ կազմակերպ-  
ուած պաշտօնական հանդէսը եղաւ եւ կը  
մնայ իբրեւ ճշմարտ անկարգութեան եւ  
մեր անական բարձրու գուցարու-  
թեան... Փրթի Շանի թատրոնին առ-  
ջեւ հասարակութիւնը խուճկով բըռ-  
նութեամբ լեչուեցաւ թատրոնի սրահը:

\*

Գում. Գափուի Մայր եկեղեցիի հան-  
դէսը տիրող խաճախութիւն եւ ժխտի մէջ  
անցաւ շատ պաղ, հակառակ կառավար-  
ական եւ պաշտօնական անձնատրու-  
թիւններու ներկայութեան: Բանաստ-  
ներէն շատեր ստիպուեցան չխօսիլ եւ  
իրենց ճառերը ու խօսքերն ու մնացին  
ձայն բարբառոյ յաւապառի...

Ճառեր խօսեցան Յոքեւանական  
կեղր. Յանձնախմբի կողմէ Տօքթ. Վ.  
Թորոնտեան, հայ Աւետարանականներու  
կողմէ Վեր. Ա. Շմառնեան, պատա-  
հական կերպով եւ իր հուճկու ձայնով  
կարգը պահպանել տալու համար Պ. Գ.  
Սաթակ: Ստեփանէ Էփ. Կուրտիկեան թուր-  
քերէն ճառ մը կարդաց որով ետք ներ-  
քին դործերու յախարար Թալէաթ պէյ  
ինքնաբերաբար խօսք առաւ եւ սովոր-  
ական քանի մը բառեր ըսաւ: Կաթո-  
լիկ Հայերու վարդական ժողովին կող-  
մէ խօսեցաւ Պ. Գ. Սահան:

Շարաթի գլխեր Բերա Փրթի Շանի  
թատրոնին մէջ Հ. Յ. Կաշիակցութեան  
եւ Ս. Գ. Հիշակեան Ուսանողական  
Միութիւններու կողմէն կազմակերպուած  
հանդէսը անցաւ աւելի լաւ պայմանե-  
րու մէջ եւ հոն ժողովուրդը գոն կարո-  
զացաւ լսել եւ հասկանալ ճառաստաններ  
ու գրական երանջական կատրոններ:  
Միութիւնները ոչ մէկ ջանք չէին խը-  
նայած հանդէսը կատարելու եւ օրուած  
տոնին համապատասխան ընկու: Կոմի-

տաս վարդապետի Նախագահութիւնը  
արդէն ինքնին կը բաւէր հանդէսին ա-  
ւելի փայլ մը տալու եւ հասարակու-  
թիւնը — ճովածաւայ հասարակութիւն  
մը — հանդէսին բերելու միջոցս որ թառ-  
բոնի սրահը նեղ կուգար եւ եթէ կա-  
րելի լլլար 4-5 անգամ աւելի մեծ սը-  
րահ մը ունենալ, դարձեալ չպիտի բա-  
ւելր: Հօրիւրաւորներ եւ հազարաւորներ  
ստիպուեցան եւ դատուել տոմսակ եւ  
տեղ չգտնելուն համար:

Մոզական լապտերի միջոցաւ  
ցոյց տրուեցան հայ ապագրչները: Մա-  
հակն ու Մեքսիկոյ Վենիզուէլայի պատկերով  
մը — որ արոււստի իրական նմոյշ մը եւ-  
ղաւ — ցոյց տրուեցաւ հայ գրականու-  
թեան ներկայ վիճակը հայ գրաւէտու-  
րու կայունութիւնը եւ այն ապագան զոր  
պիտի պատրաստենք անոնց համար: Նիւ-  
թական ու բարոյական մեծ ճիղերով  
կազմուած այս կենդանի պատկերը եր-  
կարատեւ եւ բոռն ծափերու արժանա-  
ցաւ: Այս հանդէսին մէջ բանաստեղծացին  
Պ. Պ. Ակնուրի եւ Տօքթ. Պէճնէ:

Բերային մէջ այս հանդէսէն զատ  
տեղի ունեցան երկու հանդէսներ ու:  
Ինչոր դարձեալ Փրթի Շանի թատրու-  
նին մէջ Անտալեան Սանուց Միութեան  
կողմէ իսկ միւսը Թալէաթի Պարտե-  
զին մէջ Բանակալթիլի Նիշլիլի Ֆիլի-  
զիզի եւ Նշալ — Թալի թաղեցիներուն  
կողմէ կազմակերպուած: Սանուց Միու-  
թեան հանդէսին մէջ խօսեցան Պ. Գ.  
Սաթակ, Պ. Գ. Կաշիակցի վարդական եւ Պ.  
Ռ. Զարաբան: Իսկ Թալէաթի հան-  
դէսին մէջ խօսեցան Արշարունի կայս-  
կապու, փրօթ. Յ. Ճէճիզեան եւ Պ. Թէո-  
դիկ: Կառավարութեան կողմէ ալ ճա-  
ռեր խօսեցան Բերայի կառավարչը եւ  
Պոլսոյ պաշտպան Ճիմալ պէյը:

Անկարելի է նամակի մը փոքրիկ  
սահմանին մէջ նշանակալ քանի մը բառ  
գրել իւրաքանչիւր հանդէսին մասին:  
որովհետեւ այնքան շատ են անոնք եւ  
այնքան շատ բան կայ գրելիք: Ուստի  
պիտի յիշեմ միայն թաղերու անունները  
որոնք հանդէս կազմակերպած էին:  
Գաղղիզիլի հանդէս ուր խօսեցին Պ.  
Գ. Զոհրայ եւ Գուրեան արքեպ. Սկիւ-  
տար: Պէյլիթալի կէտիկ փաշայ Գում.  
Գափու: Սրթաթոյ Գընալը: Պա-  
լաթի եւ այլն եւ այլն:

Երկու օրէ ի վեր պաւառներէն հե-  
ռագրներ կուգան որոնք կ'ապացու-  
ցանն թէ գաւառն ալ մեծ խանդա-  
վառութեամբ տուած է սղզային այս մեծ  
յոքեւանքը: